

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ  
2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐՈՎ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
(տարեկան)**

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը 2011թ	ԱՌԿԱ ՎԻՃԱԿ
	<p>1. Կրթության ոլորտի իրավական ակտերի վերանայում, կոռուպցիայի ռիսկերի գնահատում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- քաղաքացիական հասարակության և շահառուների առաջարկությունների հիման վրա որոշված է առաջնահերթ վերանայման ենթակա իրավական ակտերի ցանկը</li> <li>- ոլորտի 50 իրավական ակտեր վերանայվել են</li> </ul>

		<p>մեթոդական ուղեցույցներն ու օրինակելի ձևերը: ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեսչական բարեփոխումների խմբի հետ աշխատանքներ են տարվում մշակելու «Հայաստանի Հանրապետության կրթության պետական տեսչության կողմից իրականացվող՝ դիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և դիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կրթության պետական տեսչության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:</p> <p>Ընդհանուր առմամբ հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացնելու նպատակով վերանայվել են 23 իրավական ակտեր (հանրակրթության ոլորտում՝ 6, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում՝ 9, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում՝ 8):</p>
<p>2. Ավարտական, միասնական և կենտրոնացված քննությունների գործընթացի վերանայում</p>	<p>-</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից շրջաբերականներ են ուղարկվել ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան, բոլոր ավագ դպրոցներին, որպեսզի քննական յուրաքանչյուր առարկայի համար թեստերի շտեմարան ստեղծելու, գործող թեստերը լրամշակելու և բարելավելու նպատակով, նախարարություն ներկայացվեն ուսուցիչների կողմից մշակված՝ ավարտական և միասնական քննությունների թեստերի նմուշներ (Ա և Բ մակարդակներով): Ստացված թեստերը ներկայացվել են գնահատման և թեստավորման կենտրոն: ԳԹԿ-ն հրատարակել է «Հայոց լեզու, գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների շտեմարանները՝ օգտագործելով նաև ուսուցիչների ներկայացրած թեստերի նմուշները: Այս տարի դիմորդը նախապես տեղեկացված է լինելու նշված առարկաների քննության ժամանակ իր առջև դրվող թեստի առաջադրանքներին: ԳԹԿ-ի կողմից հրատարակվել են նաև առարկայական ուղեցույցները եւ նոր ուսումնական տարվա քննությունների շտեմարանները:</p>
<p>3. Բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ համակարգի ներդրում՝ ԲԿ որակի և համապատասխանության բարձրացման, արդյունավետության բարելավման և հասարակության տարբեր սոցիալական խմբերի համար հավասար մատչելիության</p>	<p>- հաստատված է բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը</p>	<p>ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի թիվ 25 նիստի արձանագրային որոշմամբ հաստատվել է ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը և դրա կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը:</p>

ապահովման նպատակով		
4. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման ծավալների ավելացում	<ul style="list-style-type: none"> <li>- ներդրված է «Հանրակրթական ուսումնական հաստատություններին ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման կարգը», որը կսահմանի գործունեության արդյունավետության և որակի ցուցանիշներից կախված զարգացման ֆինանսավորման նոր մեխանիզմ</li> </ul>	<p>&lt;&lt;Հանրակրթական ուսումնական հաստատություններին ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին&gt;&gt; ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2011 թվականի հունիսի 8-ի թիվ 01/11.1/6082-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն: Փորձագիտական եզրակացություն ստանալուց հետո այն սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն, սակայն իրավական ակտի ընդունումը ՀՀ կառավարության կողմից հետաձգվել է:</p>
5. Միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում	<ul style="list-style-type: none"> <li>- կանոնակարգված է միջին և բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտների տեսչավորման օրենսդրական դաշտը</li> <li>- փոփոխված է «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը</li> </ul>	<p>Մշակվել են «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքում և Կրթության պետական տեսչության կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերը: ՀՀ քաղծառայության խորհրդից, Երևանի քաղաքապետարանից, ՀՀ ֆինանսների, տարածքային կառավարման և արդարադատության նախարարություններից ստացված առաջարկությունների քննարկման արդյունքում նախագծերի նոր՝ փոփոխված տարբերակները ներկայացվել են ՀՀ կառավարություն:</p> <p>Օրենքում ներառվել են միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման հիմնավորումները:</p>
6. Բարձրագույն ուսումնական հաստատությունների հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի մշակում	<ul style="list-style-type: none"> <li>- ԲՈՒՀ-երի կառավարման խորհուրդների կողմից հաստատված է միջոցառումների ծրագիրը</li> <li>- ԲՈՒՀ-երի կառավարման խորհուրդների կողմից ընդունված և հրապարակված են կատարված աշխատանքների վերաբերյալ կիսամյակային հաշվետվությունները</li> </ul>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության 25.01.2011թ. թիվ 01/06/615-11 գրությամբ ՀՀ պետական բուհերին տրված հանձնարարականի համաձայն՝ ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ներկայացվել են Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012թթ. միջոցառումների համալիր ծրագրերը, որոնք երաշխավորվել են բուհերի գիտական խորհուրդների կողմից և հաստատվել են բուհերի կառավարման խորհուրդների կողմից: Բուհերի կառավարման խորհուրդների կողմից ընդունված և հրապարակված են կատարված աշխատանքների վերաբերյալ կիսամյակային հաշվետվությունները: Բուհերի հակակոռուպցիոն ծրագրերը ներկայացվել են հանրային ռադիոյի «Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի» հաղորդաշարով: Կազմակերպվել է «Բուհերում թափանցիկության և արդարության խթանում» խորագրով խորհրդաժողով, որին մասնակցել են նաև 4 երկրներից հրավիրված փորձագետներ:</p>

<p>7. Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում մասնագիտական կրթության ոլորտում ուսանողների վերականգնման և հեռացման գործընթացներում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- մշակված և հաստատված է «Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների վերականգնման և հեռացման» կարգը</li> <li>- մշակված և հաստատված է «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման» կարգը</li> </ul>	<p>«Կրթության և գիտության նախարարի՝ 17.11.2011թ. N1242-Ն հրամանով հաստատվել է «Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների վերականգնման և հեռացման» կարգը:</p> <p>«Կրթության և գիտության նախարարի՝ 05.12.2011թ. N1278-Ն հրամանով հաստատվել է «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման» կարգը:</p>
<p>8. Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում մասնագիտական կրթության ոլորտում ուսանողների շարժունության ապահովման գործընթացում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- մշակված և հաստատված է «Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների շարժունության» կարգը</li> <li>- մշակված և հաստատված է «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների՝ մեկ ուսումնական հաստատությունից այլ հաստատություն տեղափոխման» կարգը</li> <li>- մշակված և հաստատված է «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական մեկից ավելի կրթություն ստանալու» կարգը</li> </ul>	<p>«Կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի թիվ 1240-Ն որոշմամբ հաստատվել է «Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների շարժունության» կարգը:</p> <p>«Կրթության և գիտության նախարարի՝ 01.10.2010թ. N1455-Ն հրամանով հաստատվել է «Ուսանողների (ուկնդիրների) մեկ ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման» կարգը, իսկ 12.03.2011թ. N194-Ն հրամանով հաստատվել է «Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու» կարգը: Նշված իրավական ակտերը տեղակայված են «Կրթության և գիտության նախարարության <a href="http://www.edu.am">www.edu.am</a> պաշտոնական կայքի «Մասնագիտական կրթություն» բաժնում:</p>
<p>9. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի և կանոնների վերանայում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- վերացված են միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության քննությունները</li> </ul>	<p>«Կրթության և գիտության նախարարի՝ 24.03.2011թ. N237 հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2011 թվականի ընդունելության» կարգը: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում 2011-2012 ուսումնական տարվա ընդունելությունը իրականացվել է առանց ընդունելության քննությունների, բացառությամբ արվեստի ոլորտի մասնագիտությունների գծով:</p>

<p>10. Ապահովել ուսումնական հաստատություններում գնումների թափանցիկությունը և հրապարակայնությունը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ապահովված է գնումների պատվերների հարապարակայնությունը</li> <li>- հրապարակված են գնումների արդյունքները</li> </ul>	<p>Ուսումնական հաստատություններն իրենց գնումներն իրականացրել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն, իսկ գնման գործընթացների վերաբերյալ հայտարարությունները տեղադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական կայքում:</p> <p>Ուսումնական հաստատությունների կողմից կատարված գնումների արդյունքները նույնպես տեղադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական կայքում:</p>
<p>11. ՀՀ մարզերի ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ անմիջական վերահսկողության, օպերատիվության, արագ արձագանքման ապահովում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ-ում ստեղծվել են Կրթության պետական տեսչության տարածքային 3 մարմիններ</li> </ul>	<p>ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի N1927-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 943-Ն որոշմամբ ՀՀ Սյունիքի, Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում ստեղծվել են Կրթության պետական տեսչության՝ Հյուսիսային, Հարավային, Արևելյան և Արևմտյան տարածքային բաժիններ: Միաժամանակ կառուցվածքային փոփոխության արդյունքում Կրթության պետական տեսչության ներսում ձևավորվել է նոր՝ Մասնագիտական կրթության տեսչավորման բաժինը:</p> <p>Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ կազմակերպվել է քննարկում ՀՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչության գործունեության արդյունքում ստացված տեղեկատվության մշակման, վերլուծության և հաշվետվությունների կազմման խնդիրների վերաբերյալ: Պայմանավորվածություն է ձեռքբերվել 2012թ. հունվար-փետրվար ամիսներին կազմակերպել 5-օրյա սեմինար, որը վարելու է միջազգային փորձագետ՝ Շոտլանդիայի Որակի ապահովման ինստիտուտից: Սեմինարի նպատակն է Կրթության պետական տեսչության փորձագետներին ծանոթացնել այս ոլորտում առկա միջազգային փորձին, հետազայում այն տեղայնացնելու և կիրառելու համար:</p>
<p>12. Վարչական իրավախախտումների մասին օրենսդրության մեջ կրթության ոլորտի իրավախախտումների ցանկի վերանայում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- վարչական տույժերի կիրառում՝ ըստ կրթական մակարդակների</li> </ul>	<p>2011թ. 1-ին եռամսյակում ՀՀ կառավարություն ներկայացված՝ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ նոր օրենսգրքում ՀՀ կրթության պետական տեսչությանը՝ ըստ կրթական մակարդակների, ուսումնական հաստատությունների նկատմամբ վարչական տույժեր կիրառելու լիազորություն վերապահելու մասին առաջարկությունը ներկայումս գտնվում է ՀՀ Ազգային ժողովում:</p>
<p>13. Կրթության ոլորտի թափանցիկության, հաշվետվողականության և հանրային իրազեկման բարձրացում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- լուսաբանված է կրթության ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը</li> <li>- գործում է ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական նոր կայքը, որում գործում է ոլորտում իրականացվող</li> </ul>	<p>2011 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության գործունեությունն արժանացել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»-ի «Ոսկե բանալի» ամենամյա մրցանակին՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները արդյունավետ կատարելու համար: ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական <a href="http://www.edu.am">www.edu.am</a> կայքէջը գերատեսչական կայքերի մեջ մշտապես եղել է առաջատար եղյակում: Կայքում զետեղվել է նախարարության գործունեությանն առնչվող և հասարակական հետաքրքրություն ներկայացնող շուրջ 220 հայտարարություն, 340 լրատվական նյութ: Կրթության ոլորտի թափանցիկության, հաշվետվողականության և</p>

	<p>հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ</p> <ul style="list-style-type: none"> <li>- ՁԼՄ-ներով հրապարակվել են ուսումնառության տվյալ ժամանակահատվածում իրականացվող գործընթացում շահառուների համար հնարավոր առկա ռիսկերի վերաբերյալ պարզաբանումները</li> <li>- հրապարակված են կրթության ոլորտում իրականացվող մրցույթների գնահատման չափանիշները և արդյունքները</li> <li>- լուսաբանվել են ուսանողների շրջանում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները</li> </ul>	<p>հանրային իրազեկման բարձրացման նպատակով լուսաբանվել է կրթության ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը: Կազմակերպվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի ու նախարարի տեղակալների, վարչության պետերի 15 մամուլի ասուլիս, որոնք լուսաբանվել են հանրապետական հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների կողմից/ 51 հրապարակում/: Կայքում տեղադրվել է հանրակրթության ուսումնական հաստատության տնօրենի մրցույթի 1008 հայտարարություն:</p> <p>Նոյեմբերի 4-6-ը կրթության ոլորտը լուսաբանող լրագրողների համար Աղվերանում կազմակերպվել է &lt;&lt;Հրապարակայնությունը և հաշվետվողականությունը Բոլոնիայի գործընթացի կարևոր սկզբունքներ&gt;&gt; թեմայով եռօրյա սեմինարը, որը լուսաբանվել է հանրապետական ՁԼՄ-ներում՝ 80 հրապարակում:</p> <p>Նախարարության &lt;&lt;Թեժ գծով&gt;&gt; ընդունվել է 138 ահազանգ, որից 114-ը՝ Երևանի, 24-ը՝ մարզերի դպրոցների վերաբերյալ: Բոլոր ահազանգերը համապատասխան ընթացք են ստացել:</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում գործում է ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ: Բացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության &lt;&lt;Study in Armenia&gt;&gt; օտարալեզու կայքը:</p> <p>Պատրաստվել և Հանրային ռադիոյով հեռարձակվել է նոր հաղորդաշար &lt;&lt;Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի&gt;&gt;: Հեռարձակվել է 15 հաղորդում, որոնց ընթացքում ներկայացվել են կոռուպցիայի դեմ պայքարի ինչպես միջազգային փորձը, այնպես էլ բուհերում հաստատված ծրագրերով նախատեսված միջոցառումների ընթացքն ու փուլային արդյունքները: Հանրային ռադիոյով շուրջ 100 անգամ հեռարձակվել է հակակոռուպցիոն ուղղվածության ռադիոգովազդ:</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում և կրթական պորտալում բացվել է &lt;&lt;Հանրային քննարկում&gt;&gt; բաժինը, որը հնարավորություն է տալիս հանրությանը մասնակցել իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին: Հանրային քննարկումների է դրվել 25 իրավական ակտի նախագիծ:</p> <p>&lt;&lt;Կրթություն շաբաթաթերթում&gt;&gt; և ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում՝ <a href="http://www.edu.am">www.edu.am</a> հրապարակվել են հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք/հավաստագիր/ ստանալու նպատակով քննական հարցաշարերը: Քննական գործընթացի իրականացումը լուսաբանվել է շուրջ 40 հեռուստատեսային, ռադիո նյութերով և տպագիր ու էլեկտրոնային հրապարակումներով: Մրցույթի հաղթողների ցանկը տեղադրվել է պաշտոնական կայքում:</p>
--	--	---

		<p>« Կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել են մանկավարժների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների մրցույթի գնահատման չափանիշները և արդյունքները: «Վորլդ Վիժն» հասարակական կազմակերպության աջակցությամբ մշակվել և տպագրվել են 3 տեղեկատվական բուկլետներ՝ աշակերտների, ծնողների և ուսուցիչների համար, որոնցում ներառված են պարզաբանումներ՝ հնարավոր կոռուպցիոն ռիսկեր ենթադրող հարցերի վերաբերյալ:</p>
<p>14. Գիտելիքի արժևորմանը միտված հասարակական կարծիքի ձևավորում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- հեռարձակվել են սոցիալական հոլովակներ</li> <li>- վերանայված է առարկայական օլիմպիադաների անցկացման կարգը՝ մրցակցային դաշտ, թափանցիկություն և հաշվետվողականությունն ապահովելու նպատակով</li> <li>- հրապարակային խրախուսման են արժանացել ինտելեկտուալ խաղերի և մրցույթների, առարկայական օլիմպիադաների հաղթողները, լավագույն ուսանողներն ու աշակերտները</li> </ul>	<p>Գիտելիքի արժևորմանը միտված հասարակական կարծիքի ձևավորման նպատակով պատրաստվել և Հայաստանի հանրային և այլ հեռուստաընկերությունների եթերներով հեռարձակվել են «Ես սիրում եմ իմ դպրոցը» անիմացիոն սոցիալական հոլովակները (8 հոլովակ):</p> <p>Հրապարակային խրախուսման են արժանացել ինտելեկտուալ խաղերի և մրցույթների, առարկայական օլիմպիադաների հաղթողները, լավագույն ուսանողներն ու աշակերտները :</p> <p>Լրամշակվել և « Կրթության և գիտության նախարարի՝ 05.04..2011թ. N280-Ն հրամանով հաստատվել է « Կրթության և գիտության նախարարի առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման » կարգը: Նոր կարգի համաձայն հստակեցվել են առարկայական օլիմպիադաների կազմակերպման ու անցկացման մեխանիզմները, առանձին փուլերի պատասխանատուները, գործընթացը դարձել է ավելի թափանցիկ:</p>
<p>15. Կրթության ոլորտի մասնակցային մոնիթորինգ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ձևավորված է կրթության ոլորտի հանրային ցանց</li> <li>- ներկայացված են անկախ վերահսկողության քաղաքացիական հասարակության ինտիտուտների կողմից հաշվետվություններ, վերլուծություններ, առաջարկություններ</li> </ul>	<p>« Լավագույն քննն է » հասարակական կազմակերպության հետ համատեղ, 2011թ. փետրվար-հուլիս ժամանակահատվածում իրականացվել է « Կրթությունը՝ կոռուպցիայի կանխարգելման միջոց » ծրագիրը: Ծրագրի շրջանակներում հնգօրյա հակակոռուպցիոն դասընթացներ են իրականացվել Երևանի և « Կրթության և գիտության նախարարի 19 ուսումնական հաստատություններում՝ 9 նախնական և միջին մասնագիտական, 10 բարձրագույն ուսումնական հաստատություններում, որոնցում ընդգրկվել է ավելի քան 1000 ուսանող: 19 ուսումնական հաստատություններից յուրաքանչյուրում ձևավորվել է նախաձեռնող երիտասարդների խումբ, որոնց կողմից կազմակերպվել և իրականացվել են հակակոռուպցիոն երիտասարդական միջոցառումներ:</p> <p>Վերապատրաստվել են 32 ուսուցանողներ, որոնք ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները կկիրառեն իրենց ուսումնական հաստատություններում՝ աջակցելով կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումների, տեղեկատվական դասընթացների կազմակերպմանն ու հետազոտությունների անցկացմանը:</p> <p>« Բաղաքական և սոցիոլոգիական հետազոտությունների ինստիտուտ » ՀԿ-ն իրականացրել է « Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության</p>

		<p>ոլորտի ներկա իրավիճակի և Բոլոնիայի գործընթացի համատեքստում բարեփոխումների իրականացման ընթացքի վերաբերյալ&gt;&gt; թեմայով հետազոտությունը: Հետազոտության հիմքում կոռուպցիոն երևույթների բացահայտման է բարձրագույն կրթության ոլորտում, ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքներն ու նրանց վերաբերմունքը երևույթի նկատմամբ: Հետազոտությունն անցկացվել է հանրապետության 3 քաղաքների 23 բուհերում:</p> <p>Նշված հետազոտության արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարություն:</p>
<p>16. Նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն կարողությունների զարգացում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- հաստատված է ՀՀ ԿԳ նախարարության հաղորդակցման ռազմավարությունը</li> <li>- հաստատված է ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի կարողությունների զարգացման ծրագիրը</li> </ul>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ՄԱԶԾ-ի և UNESCO-ի հետ համատեղ մշակել է ՀՀ ԿԳՆ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կարողությունների, ինչպես նաև վերապատրաստման կարիքների գնահատման փաթեթ և գործողությունների ծրագիր: Այս համագործակցության շրջանակներում մշակվել և ՀՀ ԿԳ նախարարի՝ 28.03.2011 N242-Ա/Ք հրամանով հաստատվել է նաև «ՀՀ կրթության և գիտության նախարարության հաղորդակցության 2011-2015թթ. ռազմավարությունը», որը նպատակաուղղված է կառավարման բարելավմանն ու աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը:</p> <p>Միաժամանակ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի համապատասխան մասնագետների համար անցկացվել է եռօրյա սեմինար՝ նպատակաուղղված հանրակրթության ոլորտի քաղաքականության պլանավորման կարողությունների զարգացմանը:</p>